

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
16	Մարտ	2020 թ.		Բ	5974569671
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
16	Մարտ	2020 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կերման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՂՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ			N 1570015111280200				
[12] Գտնվելու վայրը (ծասցեն)	Յոդ միկ. շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.			N 900011180081				
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար					
	Լիազորագիր	Համար		Ամսաթիվ				

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Ծավալի միավորը	Մի միավոր կամ մասնավոր թվով	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	28	1000		28000
2	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	4	1000		4000
3	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	1000		2000
4	Հայերեն-արաբերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	2900		5800
5	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	1000		3000
6	Գերմաներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	2500		2500
7	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	էջ	1	2500		2500
8	Հայերեն-արաբերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	2900		2900
9	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	11	1000		11000
10	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	1000		2000
11	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	8	1000		8000
12	Ֆրանսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	2400		4800
13	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	2400		2400
14	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	8	1000		8000
15	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	17	1000		17000

16	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	3	1000	3000
Ընդամենը					106900

Մատայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

STEPANYAN HMAYAK 2301850293

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

16/03/2020 17:51:41

Մատայություն
(աշխատանք)
ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

17/03/2020 17:14:48

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

13 հունվարի, 2020 թ.

ք. Վանաձոր

Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ռ.Մինասյանս, վերանայելով ՌԴ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող մեղադրյալ Ջոնով Դժամալ Մազամեդովիչին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը և կից փաստաթղթերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2019 թվականի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 16:30-ին, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի աշխատակիցների կողմից բերման է ենթարկվել, այնուհետև ժամը՝ 17:50-ին ձերբակալվել և ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի ՁՊՎ տեղափոխվել Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 264.1-րդ հոդվածի հատկանիշներով հետախուզվող ՌԴ քաղաքացի Ջոնով Դժամալ Մազամեդովիչը:

Ջոնով Մազամեդովիչին մեղսագրվող արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասին, որը որպես պատիժ նախատեսում է ազատազրկում 6 ամսից 1 տարի ժամկետով:

17.12.2019թ. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի աշխատակիցների միջոցով ստացվել են Ջոնով Դժամալ Մազամեդովիչին կալանավորելու վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության դատարանի 05.07.2019թ. որոշումը և նախաձեռնողի կողմից նրա հետախուզումը հաստատելու մասին գրությունը՝ անհրաժեշտ փաթեթով:

2019 թվականի դեկտեմբերի 20-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ջոնով Մազամեդովիչի նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 40 օր ժամկետով:

ՌԴ իրավապահ մարմինների կողմից ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել Ջոնով Մազամեդովիչին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը:

Պարզվել է, Ջոնով Դժամալ Մազամեդովիչը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին ինչպես նաև նրան հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստացվել է ռուսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ քրեական դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, մինչդեռ անհրաժեշտ է Ջոնով Դժամալ Մազամեդովիչին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը և կից փաստաթղթերը թարգմանել հայերեն լեզվով, իսկ Հնայակ Մանվելի Ստեփանյանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու մասին» թիվ 193 որոշման պահանջների համաձայն մասնակցել է ռուսաց լեզվի նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգումներին և ստացել դրական միավոր և ազատորեն տիրապետում է ՀՀ քրեական դատավարության լեզվին ու ռուսերենին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով Ձոնով Դժամալ Մագամեդովիչի հանձման վերաբերյալ միջնորդությունը և կից փաստաթղթերը հայերեն լեզվով թարգմանելու նպատակով որպես թարգմանիչ ներգրավել Հմայակ Մանվելի Ստեփանյանին (անձ-նագիր՝ AM 0679214, տրված 04.04.2012 թ., 006-ի կողմից):

2. Թարգմանիչ Հմայակ Ստեփանյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

ավագ դատախազ՝



Ռ. Մինասյան

Որոշմանը ծանոթացա 2020 թվականի հունվարի < >-ին, ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները. միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

թարգմանիչ՝



Հ. Ստեփանյան

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

24.01.2020թ.

բ.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով հետախուզվող ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԳԵՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ վերաբերյալ թիվ 21/32-03-20 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՅԻ՝

Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) և Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԳԵՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ 08.01.2020թ. հայտնաբերվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ մարմինների կողմից և այդ մասին հայտնվել է ԳԴՀ և ՌԴ իրավասու մարմիններին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 10.01.2020թ. որոշմամբ Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

22.01.2020թ. ՌԴ գլխավոր դատախազությունից ստացվել է Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՌԴ իրավասու մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը՝ ռուսերեն լեզվով:

Առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478³-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը՝ հիշյալ հոդվածի համաձայն Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ նկատմամբ հանձնելու համար կալանավորելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն իսկ ՀՄԱՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ հանձնման մասին ՌԴ գլխավոր դատախազության միջնորդության և կից տեղեկանքի հայերեն գրավոր թարգմանությունն

ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՀՄԱՅԱԿ ՄՏԵՓԱՆՅԱՆԻՆ (ID card N°000931923, ՀՀ արդարադատության նախարարի 10.06.2013թ. տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական

համագործակցության վարչության պետի տեղակալ



Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

ՀՄԱՅԱԿ ՄՏԵՓԱՆՅԱՆ



24.01.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

« 31 » հունվարի 2020թ.

ք. Արուվյան

Կոտայքի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Լ. Ա. Նիկողոսյանս, ուսումնասիրելով Պյոտր Մանվելի Մուրադյանի՝ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմիններին հանձնելու մասին ՌԴ գլխավոր դատախազությունից ստացված հարցումը և կից փաստաթղթերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2019թ. հունիսի 4-ին, ժամը 10:00-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժին է բերման ենթարկվել ՌԴ իրավասու մարմնի կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի և 158-րդ հոդվածի 3-րդ մասի «Ա» կետի հատկանիշներով հետախուզվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Պյոտր Մանվելի Մուրադյանը:

2019թ. հունիսի 4-ին Պ. Մուրադյանը ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի բաժնի ՁԱՊՎ:

Կոտայքի մարզի դատախազության կողմից Պ. Մուրադյանի նկատմամբ 40 օր ժամանակով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվել դատարան, որը դատարանի որոշմամբ բավարարվել է:

01.07.2019թ. ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել է Պ. Մուրադյանի հանձնման մասին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջնորդությունը:

08.07.2019թ. Կոտայքի մարզի դատախազության կողմից միջնորդություն է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Պ. Մուրադյանի նկատմամբ հանձնման նպատակով 2 ամիս ժամանակով կալանավորում կիրառելու վերաբերյալ, որը դատարանի 10.07.2019թ. թիվ ԿԴ1/0006/06-2019թ. որոշմամբ բավարարվել է:

29.08.2019թ. Կոտայքի մարզի դատախազության կողմից միջնորդություն է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Պ. Մուրադյանի նկատմամբ հանձնման նպատակով կիրառված 2 ամիս ժամանակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որը դատարանի 03.09.2019թ. թիվ ԿԴ1/0006/06-2019թ. որոշմամբ բավարարվել է:

29.10.2019թ. Կոտայքի մարզի դատախազության կողմից միջնորդություն է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Պ. Մուրադյանի նկատմամբ հանձնման նպատակով կիրառված 2 ամիս ժամանակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որը դատարանի 05.11.2019թ. թիվ ԿԴ1/0006/06/19 որոշմամբ բավարարվել է:

25.12.2019թ. Կոտայքի մարզի դատախազության կողմից միջնորդություն է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Պ. Մուրադյանի նկատմամբ հանձնման նպատակով կիրառված 2 ամիս ժամանակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որը դատարանի

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

03 փետրվարի 2020թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով թիվ 62229318 քրեական գործով Լիբանանի Հանրապետության իրավասու մարմիններին հասցեագրված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ գլխավոր դատախազության 30.05.2019թ. թիվ 21/12-409-19 գրությամբ թիվ 62229318 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումը ուղարկվել է Լիբանանի Հանրապետության իրավասու մարմիններին:

19.08.19թ ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել թիվ 62229318 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանության միջոցով լիբանանական կողմից ստացված պատասխանը. ըստ որի հայցվում է միջնորդությունը Լիբանանի Հանրապետության իրավասու մարմիններին փոխանցել արաբերեն լեզվով:

Հիմք ընդունելով այն որ Զաքարյան Մարալը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 62229318 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցման արաբերեն թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Մարալ Զաքարյանին(ՀՀ քաղաքացու անձնագիր AP0625401, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09.02.2015թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, ընկիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

«Ղյխավոր դատախազության
միջազգային-իրավական համա-
գործակցության դատախազ



Ա. Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«03» 02 2020թ.



Մ. Ջաբարյան

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

03.02.2020թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով հետախուզվող ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԳԵՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ վերաբերյալ թիվ 21/32-03-20 վարույթի նյութերը,

ՊԱՆՁԵՑԻ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) և Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԳԵՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ 08.01.2020թ. հայտնաբերվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ մարմինների կողմից և այդ մասին հայտնվել է ԳԴՀ և ՌԴ իրավասու մարմիններին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 10.01.2020թ. որոշմամբ Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

22.01.2020թ. ՌԴ գլխավոր դատախազությունից ստացվել է Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՌԴ իրավասու մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը՝ ռուսերեն լեզվով:

Առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478³-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը՝ հիշյալ հոդվածի համաձայն Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ նկատմամբ հանձնելու համար կալանավորելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն՝ իսկ ՀՄԱՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանիչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կապված չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռարկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Հ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ հանձնման մասին ՌԴ գլխավոր դատախազության միջնորդությանը կից ՌԴ Մոսկվա քաղաքի Գոյովինսկի շրջանային դատարանի

15.01.2020թ. որոշման հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՀՄԱՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ (ID card №000931923, ՀՀ արդարադատության նախարարի 10.06.2013թ. տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական

համագործակցության վարչության պետի տեղակալ



Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

ՀՄԱՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ



03.02.2020թ.

ՈՐՈՇՈՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

05.02.2020թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Լուսապարյանն, ուսումնասիրելով №57104019 քրեական գործով հետախուզվող ԱԹՈՒՐ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ վերաբերյալ Վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 20.09.2019թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №57104019 քրեական գործով հետախուզվող ԱԹՈՒՐ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

31.01.2020թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ ուղարկվում է ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության միջոցով ԳԴՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված հայտագրի պատճենը՝ Աթուր Հարությունյանի հանձնման գործընթացի վերաբերյալ: Գրությանը կից տրամադրվել է 1 կշից բաղկացած փաստաթուղթ՝ գերմաներեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կաակած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված՝ Ա.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտավորությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի է-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կարծնրով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմանը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դարսխաագ



Ա. Խաչատրյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դարսախարչության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարզահանություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարսասխանարիության մասին նախագգուշացված են:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



« 25 » 02 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

12.02.2020թ.

ք.երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյան, ուսումնասիրելով №57104019 քրեական գործով հետախուզվող ԱԹՈՒԲ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐՁԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 20.09.2019թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №57104019 քրեական գործով հետախուզվող ԱԹՈՒԲ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Ա.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել են լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ):

10.02.2020թ. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում ստացվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրված երաշխիքները (№15/102934-20 գրությունը): Սույն երաշխիքներն անհրաժեշտ է ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին՝ Ա.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Համաձայն ՀՀ ոստիկանության ԱԿԲ-ի գրության, գերմանական կողմը պահանջել է Ա.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել գերմաներեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճարելի դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ա.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր՝ ԵԱ սերիայի №0387407, ԵՂՀ դիպլոմ Ա № 003927) և կրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դատախազ



Ա.Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



«12»...02... 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«14» փետրվարի 2020թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով Լիբանանի Հանրապետության (ԼԻ) իրավասու մարմիններին հասցեագրված՝ թիվ 15158319 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Թիվ 15158319 քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել դիմել (ԼԻ) իրավասու մարմիններին քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությամբ: Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՀՀ ՔԿ 31.01.2020թ. գրությունն ու արաբերեն թարգմանված՝ քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությունը:

ԼՀ իրավասու մարմիններին քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությունները ՀՀ իրավասու մարմնի կողմից ուղարկվում են միջազգային իրավունքի «Բարի կամքի» և «Փոխադարձության» սկզբունքների հիման վրա: ԼՀ իրավասու մարմինների հետ քրեական գործերով իրավական օգնության ոլորտում համագործակցելու ընթացքում Լիբանանյան կողմը պահանջում է իրեն հասցեագրված միջնորդություններն ու կից փաստաթղթերն ուղարկել արաբերեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ ՔԿ-ից ստացված թիվ 15158319 քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին արաբերեն թարգմանված միջնորդությանն անհրաժեշտ է կցել ԼՀ իրավասու մարմիններին հասցեագրած ՀՀ գլխավոր դատախազության կից գրության արաբերեն թարգմանությունը, իսկ ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 15158319 քրեական գործով ԼՀ իրավասու մարմիններին հասցեագրած ՀՀ գլխավոր դատախազության գրության արաբերեն թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ (ՀՀ քաղաքացու անձնագիր AP0625401, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09.02.2015թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-
իրավական համագործակցության դատախազ



Ա.Խաչատրյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
«14» փետրվարի 2020թ.



ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

14.02.2020թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Ասատրյանս, ուսումնասիրելով թիվ 14959419 քրեական գործով մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն է ստացվել թիվ 14959419 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Հրաչիկ Լևոնի Այվազյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով՝ մեղադրական եզրակացությամբ:

Մինչդատական քրեական վարույթի ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Հրաչիկ Այվազյանը տիրապետում է ուսերեն լեզվին, հետևաբար մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածները անհրաժեշտ է նրան տրամադրել ուսերեն լեզվով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում է թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

